

# **Goodwin v. The United Kingdom, 1996, Application No:17488/90, Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Թեմա: Լրագրողական աբյուրների պաշտպանություն

Ենթաթեմա: Առևտրային գաղտնիք

Թեսթը: Անհրաժեշտությունը

Սանկցիան: Աղբյուրի բացահայտման կարգադրություն, ֆինանսական և այլ

Վճիռը: Արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Միացյալ Թագավորություն

## **Գործի փաստական հանգամանքները.**

Բողոքը վերաբերել է տեղեկատվության աղբյուրի բացահայտման կարգադրությանը, որով լրագրողից պահանջվում էր բացահայտել իր տեղեկատվության աղբյուրը, և չբացահայտելու համար նրա նկատմամբ կիրառված տուգանքին:

## **ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.**

Այն հարցը, որ դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ միջամտություն է դրսևորվել, չէր վիճարկվում: Վիճարկվող բացահայտման կարգադրությունն ու տուգանքը նախատեսված էին օրենքով: Դատարանը հիշեցնում է, որ իր ձևավորած դատական նախադեպի համաձայն՝ համապատասխան ներպետական օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, որպեսզի հնարավորություն տա անձին, անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական խորհրդատվությամբ, կանխատեսել տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են վրա հասնել տվյալ գործողության արդյունքում: Օրենքը, որը հայեցողության տեղ է թողնում, ինքնին չի հակասում այս պահանջին այն պայմանով, որ հայեցողության շրջանակները և դրա իրականացման եղանակը բավարար որոշակիությամբ են սահմանված՝ հաշվի առնելով համապատասխան իրավաչափ նպատակը, որպեսզի անձը ունենա անհրաժեշտ պաշտպանություն կամայական միջամտությունից:

Դատարանի կարծիքով՝ օրենքի մեկնաբանությունը ներպետական դատարանների կողմից հեռուն չի գնացել ողջամտորեն ակնկալվող մեկնաբանությունից: Չկար նաև որևէ հիմք պնդելու, որ օրենքը դիմումատուին բավարար պաշտպանություն չի ապահովել կամայականությունից:

Միջամտությունը՝ որպես հետապնդվող իրավաչափ նպատակ, ունեցել է այլոց իրավունքների պաշտպանությունը, և անհրաժեշտ չէր նաև քննարկել այն հարցը, թե արդյոք միջամտությունը որպես նպատակ ունեցել է նաև հանցագործությունների կանխարգելման նպատակը: Դատարանը շարունակեց՝ շեշտելով, որ լրագրողական

աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնական պայմանն է, ինչպես որ արձանագրված է անդամ պետությունների օրենսդրություններում և վարքագծի կանոնագրքերում և հաստատված է նաև լրագրողական ազատության վերաբերյալ մի քանի միջազգային փաստաթղթերում: Առանց նման պաշտպանության՝ տեղեկատվության աղբյուրները կարող են ձեռնպահ մնալ մամուլին տեղեկատվություն տրամադրելուց՝ հանրային շահերին վերաբերող հարցերով: Որպես հետևանք՝ մամուլի՝ հասարակական հսկիչի կենսական դերը կարող է արժեզրկվել և վատ հետևանքներ թողնել ճշգրիտ ու վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի ունակության վրա: Ժողովրդավարական հասարակությունում մամուլի ազատության համար աղբյուրների պաշտպանության կարևորությունը հաշվի առնելով, ինչպես նաև աղբյուրի բացահայտման կարգադրության հնարավոր սառեցնող ազդեցությունը այս ազատության իրականացման վրա, նման միջոցը համատեղելի չէ 10-րդ հոդվածի հետ, քանի դեռ արդարացված չէ հասարակական շահից բխող գերակշռող պահանջով: Լրագրողական աղբյուրների գաղտնիության սահմանափակումները ենթադրում են խիստ վերահսկողություն ՄԻԵԴ-ի կողմից: Տվյալ գործի հանգամանքներում Դատարանը նշեց, որ աղբյուրի բացահայտման կարգադրությունը, որը տրվել էր համապատասխան ընկերության միջնորդությամբ, առաջին հերթին հիմնված էր ընկերության առևտրային գործունեությանը և աշխատողների բարօրության սպառնացող վնասի վտանգով, այդ տեղեկատվության բացահայտման արդյունքում: Այնուամենայնիվ, բացահայտման կարգադրության հիմնավորումը պետք է դիտարկվի միջանկյալ արգելքի սահմանման ավելի լայն համատեքստում, որով սահմանափակվում էր ոչ միայն դիմումատուի, այլև բոլոր ազգային թերթերի և ամսագրերի իրավունքը տպագրելու գաղտնի առևտրային պլանից բխող տեղեկատվությունը:

Բացահայտման կարգադրության նպատակը գրեթե նույնն էր, ինչ սահմանված միջանկյալ արգելքի նպատակը: Դատարանի կարծիքով քանի որ բացահայտման կարգադրությունը ուղղակի ծառայել է միջանկյալ արգելքը ապահովելու համար, արտահայտվելու ազատության իրավունքի լրացուցիչ սահմանափակումը, որին այն հանգեցրել է, հիմնավորված չէր բավարար պատճառներով՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակներից ելնելով:

Ինչ վերաբերում է բացահայտման կարգադրության այլ նպատակներին, մասնավորապես, Ընկերության շահը մամուլից տարբերվող այլ միջոցով տեղեկատվության տարածման վնասի շարունակական վտանգը, փոխհատուցում ստանալու, և անհավատարիմ աշխատակցին բացահայտելու մեջ Ընկերության շահագրգռվածությունը, նույնիսկ ամբողջության մեջ վերցրած բավարար չէին լրագրողական աղբյուրները պաշտպանելու՝ հասարակական կենսական շահը գերակշռելու համար: Հետևաբար, բացահայտման կարգադրությամբ հետապնդվող այլ նպատակները չեն հանգեցրել հասարակական շահից բխող գերակշռող պահանջի ձևավորմանը: Այսպիսով, դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը չի կարող անհրաժեշտ համարվել Ընկերության իրավունքների պաշտպանության համար՝ չնայած պետության հայեցողական լուսանցքին: Տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում: